

## Յ. ԻՐԱՋԵԿ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼԻՑ

(Մի քանի նշտումներ եւ լրացումներ)

## Ա.

Հայկական Տպագրութիւնը Հայ Մշակոյթի առաջնակարգ արտայատնութիւններից մէկն է եւ միեւնոյն ժամանակ պերճախօս ասլացոյցը մեր ցեղի քաղաքակրթական ընդունակութիւնների։ Մենք պարծանքով կարող ենք ասել, որ այսօր աւելի քան չորս հարիւր տարիների պատկառելի հասակ ունի նա։ Եւ, ժամանակի այդ հսկայ տարածութեան ընթացքում, որպէս մէկ մշտավառ փարոս կամ մէկ անջնջելի ջահ, միշտ բոցալառուել է հայոց մթնած երկնքում, լոյսի ու լուսաւորութեան անսպառ աղբիւր հանդիսանալով ժողովրդի համար եւ նրա տառապալից ուղին լուսաւորելով։

Դժբախտաբար, մինչեւ այսօր տակաւին մենք չունենք մեր Տպագրութեան լիակատար եւ ստորդ պատմութիւնը - սկզբից մինչեւ մեր օրերը, որ կը լինէր միաժամանակ եւ մեր ժողովրդի քաղաքակրթութեան պատմութեան լաւագոյն յուշարձաններից մէկը. քանզի չէ՞ որ տպագրութիւնը մի ժողովրդի քաղաքակրթութեան լաւագոյն սաստիճանացոյցն է։

Որքան մեզ յայտնի է՝ այդ ուղղութեամբ առաջին փորձը կատարել է Ս. Ղաղարի ականաւոր միաբաններից Հ. Գարեգին Զարպհանալեանը, 1895 թւին հրատարակելով իր Հայկական Տպագրութեան պատմութիւնը, ջանալով 250 ութածալ էջերի մէջ ամփոփել հայ տպագրութեան ամբողջ պատմութիւնը - սկզբից մինչեւ մեր օրերը : \*) Հասկանալի է, որ այսքան նեղ սահմաններում չէր կարելի հարկաւոր ընդարձակութեամբ ներկայացնել մեր Տպագրութեան պատմութեան հսկայ նիւթը։ Ու Հ. Զարպհանալեանի աշխատութիւնը նրա մէկ սեղմ համառօտութիւնն է միայն, կմակարդ։

\*) Պատմութիւն Հայկական տպագրութեան - սկզբնաւորութեմէն մինչեւ առ մեզ Վենետիկ, Մխիթարեան տպ. 8, 250 + 31 էջ (վերջին 31 էջը Տպագրութեան սկզբից մինչեւ 1800 թիւը լոյս տեսած գրքերի ցուցակն է)։

Այսուհետեւ լէօն 1901 և 1902 թւականներին հրատարակում է իր հանրածանօթ «Հայկական տպագրութիւնը», երկու հատոր, որ համեմատաբար աւելի ընդարձակ է և աւելի լիակատար, թէեւ մի քիչ վիպական :\*)

Ուրիշ հրատարակութիւններ այդ ուղղութեամբ մենք չգիտենք, եթէ չհաշւենք Աղ. Երիցեանի և այլոց մի քանի պատահական յօդածներն ու գըռոյկները :

Բայց թէ Հ. Զարպհանալեանի և թէ Լէօփ գործերը, թէպէտ իրենց տեսակի մէջ այնուամենայնիւ շատ արժէքաւոր, լիակատար չինելու հետ միասին, մի շարք բացեր ու անձառութիւններ ունեն իրենց մէջ :

Մենք միանգամայն հեռու ենք դրա համար նրանց հասցէին որ- եւէ մեղագրանք անգամ ենթագրելու մտքից, որովհետեւ շատ լաւ դիտենք, որ մեղաւորը իրենք չեն, այլ մեր կեանքի առարկայա- կան պայմանները, և ով էլ որ լինէր նրանց փոխարէն, մեր կեան- քի այս պայմաններում հազիւ թէ կարողանար աւելի կատարեալ գործ հրապարակ բերել :

Լիակատար և առոյգ Տպագրութեան պատմութիւն գրելու հա- մար ամենից առաջ հարկաւոր է, որ հեղինակն իր տրամագրութեան տակ ունենայ հայերէն լեզով լոյս տեսած բոլոր գրքերն ու հրատա- րակութիւնները - սկզբից մինչեւ մեր օրերը: Կամ թէ չէ՝ գոնէ նը- րանց լիր մատենագրութիւնը, այսինքն՝ լիակատար ցուցակը հա- յերէն բոլոր հրատարակութիւնների - իրենց համառօտ բովանդա- կութեամբ, նկարագրութեամբ, յիշատակարաններով և մի շարք այլ անհրաժեշտ ծանօթութիւններով: Դժբախտաբար մենք ո՛չ աղ- դային գրադարաններ ունենք, ուր ամբարտած լինէին մեր բոլոր տը- պագրութիւնները, ոչ էլ Հայկական լիր մատենագրութիւն :\*\*\*)

Սոյն յօդւածով մենք նպատակ ունենք սրբագրելու մեր նկատած կարեւոր անձառութիւնները, ինչպէս և մի քանի անհրաժեշտ լրա- ցումներ անելու, յատկապէս Հնդկահայոց Տպագրութեան պատմու- թեան վերաբերմամբ - թէ՛ Հ. Զարպհանալեանի և թէ՛ Լէօփ աշ-

\*) Լէօփ «Հայկական տպագրութիւն» - մեր կեամքը, գրականութիւնը անցեալում. Թիֆլիս, Ա. հատոր, 451 էջ, Բ. հատոր, 610 էջ:

\*\*) Հ. Զարպհանալեանի «Մատենագիտութիւնը», տպագրութեամ սկզբից մինչև 1883 թիւը, դժբախտաբար շատ բերի է ու պակասաւոր. իսկ Հ. Ղազիկեամինը, ար խսկապէս հոյակապ աշխատութիւն է, մնաց կիսատ (մինչեւ Ն տառը), ենդի- նակի վաղաժամ մահեամ պատմառով:

խատութիւնների մէջ։ Այդ անում ենք այն դիտակցութեամբ, որ առհասարակ պատմութիւնը պէտք է լինի ստոյդ եւ ճիշտ։

Բուն նիւթին անցնելուց առաջ, սակայն, անհրաժեշտ ենք համարում մէկ համառօտ ակնարկ ձգել Հնդկահայ Տպագրութեան պատմութեան վրա, որ մեր նիւթի լուսաբանութեան տեսակէտից շատ կարեւոր է։

### Բ

Ինչպէս յայտնի է, Հնդկահայ գաղութը իր սկզբնաւորութեան օրից հսկայական դեր է խաղացել մեր աղդային - հասարակական բովանդակ կեանքում։ Իր փոքրիկ տեղովը՝ նա յաճախ իր կամքն է թելադրել ո՛չ միայն Սպահանին ու Նոր Ջուղային, որ թերեւս աւելի հսկանալի է, այլիւ հեռաւոր կյժիածնին, Ռուսաստանում, եւ բուն հայրենիքում ապրող հայութեան։ Հաստատելով մէկ հեքեաթային երկրում, դրա հետ միասին եւ իր ցեղային փայլուն ընդունակութիւնները գործի դնելով՝ նա կարճ ժամանակի ընթացքում նիւթական ահագին կարողութիւն է ձեռք բերում, ուղղակի առասպելական։ Իսկ դրամը, հարստութիւնը մեր աշխարհում ինքն ըստ ինքեան արդէն հզօրութեան մի զօրաւոր զէնք է։ Մանաւանդ որ Հնդկահայ մեծատունը կարողանում է գեղեցիկ ձեռով օգտագործել իր հարստութիւնը եւ դրանով է՛լ աւելի զօրացնել իր ոյժն ու հեղինակութիւնը։

Հնդկահայ հարստի տիպը, ընդհանուր առմամբ, բարեգործ է եւ իր ժողովրդի ցաւերին ու կարիքներին արձագանքող, հոգ չէ թէ իր ժողովուրդը կը լինի բուն երկրում, թէ աշխարհի բոլոր ծայրերում սփուտած զաղութիւններում։ Միլիոններով կարելի է հաշել այն դումարները, որ Հնդկահայ մեծատունը սիրով նւիրաբերել է իր զեղի հոգեւոր - կրօնական, մշակութային ու բարեգործական պէտքիրին - բուն հայրենիքում, Ռուսաստանում, Պարսկաստանում, Եւրոպայում եւ այլ վայրերում։ Եւ տասնեակներով, զուցէ հարիւներով՝ այն հիմնարկութիւններն ու ձեսնարկները, որ Հնդկահայ վաճառականի մեծագործութեան արդինք են։

Բայց այդ ամենի հետ միասին՝ Հնդկահայը մի գեղեցիկ բնութագիծ է ունէր, ի հարկէ, խօսքը անպիտանների ու վատերի մասին չէ։ Այն է՝ լուսաւորել եւ լուսաւորել իր հայրենակիցներին։

Ընկնելով Անգլիայի նման մի լուսաւոր պետութեան հրվանաւորութեան ներքոյ, այլև ազատ Հնարաւորութիւններ ունենալով ուսման, լուսաւորութեան հետամուտ լինելու, Հնդկահայութիւնը այդ

մարզում եւս երեւան է բերում իր ցեղային ընդունակութիւնները եւ գեղեցիկ ձևով օգտագործում։ Դրա արդիւնքը լինում է այն, որ չուտով իր ծոցում ծնունդ է տալիս այն բոլոր հիմնարկներին - գլորոց, տպարան, մամուլ, դրականութիւն, թատրոն և այլն - որոնք իւրաքանչիւր ժողովրդի լուսաւորութեան ու զարգացման գլխաւոր գործօններն են հանդիսանում։ Ու այդ ամենը նա անում է գիտակցաբար, - ինչպէս ասացինք - երկու գեղեցիկ նպատակ հետապնդելով։

Առաջին՝ իր բնածին ուսման ծարաւին գոհացում տալու նպատակով. մանաւանդ որ այդ այլեւս օդի չափ անհրաժեշտ էր նրան՝ իր նոր հայրենիքում ասլրելու, յարատեւելու եւ յատկապէս լուսաւոր տիրողների հանդէպ մրցութեան գիմնալու համար։

Երկրորդ՝ նա մտածում էր լուսոյ այդ աղբիւրներից կենսատու ճառագայթներ սփոել հեռուները եւ լուսաւորել խաւարի մէջ խարիսխող իր ազգակիցներին, առաջին հերթին՝ մայր հայրենիքում, անթափանց մթութեան մէջ նստած իր հարազատներին։

Լաւագոյն միջոցը լուսաւոր զաղափարները, մասնաւորապէս աղքասիրութեան ու ազատասիրութեան դաղափարները հայ սրտերում սերմանելու համար, տպարանն էր, տպագրաւրիւնը։ Դրա համար էլ հնդկահայերը, տպարանի եւ տպագրութեան վրա չեն նայում որպէս նիւթական հարստութեան մէկ աղբիւրի։ Սա երկրորդական է. գլխաւորը՝ որ նրանց միջոցով ուսում, լոյս տարածեն եւ իրենց ժողովրդի բարձրացման սրբազն գործին ծառային։

Ահաւասիկ մէկը հնդկահայ տիպար հայրենասէրներից՝ տպարանատէր Սարգիս Աղա Վարդանը, որը Մագրասում իր տպարանը հիմնելով «ցանկայր ամենայն յօժարութեամբ սրտի, հանդերձ ծախիւր իւրովք, զի յիւրում տպարանի տպագրեսցին ամենայն նորատիպ մատեանք առ ի հոգեւոր վայելումն ամենայն Հայկագեան տոհմի»。(Ընդգծումը մերն է. իրազեկ)։

Զմուններ նաեւ արձանագրել, որ այդ աղքաշին գործում հնդկահայ բոլոր քաղաքների թւում առաջնութեան պատիւը պատկան նում է հեռաւոր Մագրասին - գոնէ տպարանական ու դրական մարդում։ Մագրասումն էր, որ բացւեց տաճէին հնդկահայ տպարանը, եւ Մագրասն էր որ հիմնադիրը եղու ո՛չ միայն հնդկահայութեան, այլև բովանդակ հայութեան լրագրաւթեան։ («Աղդարար» Շմաւոնեանի)։ Մագրասի գեղեցիկ օրինակին հետեւեցին եւ միւս հնդկահայ քաղաքներն ու հնդկական հայարնակ կղզիներից մի քանիսը, բայց գլխաւորապէս Կալկաթան, որը հետագայում բովանդակ հնդկահայութեան մտաւոր - աղքային կենարոնը գարձաւ։

Մի կողմ թողնելով Հնդկահայոց բազմարդիւն գործունէութիւնը կեանքի միւս մարզերում, մի քանի խօսքով ներկայացնենք այսուղ միայն երկու գլխաւոր կենտրոնների - Մադրասի եւ Կալկաթայի - կատարած նւաճումները յատկապէս հայկական տպագրութեան մարդում :

Հնդկահայոց առաջին տպարանը բացւել է Մադրասում 1772 թւին : Այնուհետեւ տարբեր ժամանակներում, բայց կարելի է ասել՝ յաջորդաբար, մինչեւ 1812 թիւը, Մադրասում գոյութիւն է ունեցել հայ տպագրութիւնը : Չորս տպարան ենք ունեցել այնաեղ - Յակոր Շահամիբեանի, Յարութիւն քահ . Շմաւոնեանի (Շիրազեցի), Սարդիս Աղավալեանի եւ Երբարք Յակոր ու Յովսէփ Շամբեանների :

Կալկաթայում հայկական առաջին տպարանը հիմնւել է 1796 թւին եւ այնուհետեւ իրար յետեւից այնտեղ գործել են 10 տպարաններ - Ս. Նազարէթ եկեղեցու կամ Յովսէփ քահ . Ստեփաննոսեանի, Աւետ Զնթլումեանի (սաեւ Զնթլում Աւետեանի), Օճանասփիւռեան ընկերութեան (սկզբում Բոմբէյ քաղաքում), Մարդասիրական ճեմարանի, Անդլիական Եպիսկոպոսական ճեմարանի, Մկրտիչ (Բապտիստ) միսիոնարների, Արարատեան ընկերութեան (յետոյ՝ Աղքանի Արարատեանի), Պողոս Վիշինեանի «Արծիւ», Միսիոնարաց եւ Խաչկեան Յովհաննէս քահանայի :

Մեր կազմած ցուցակով՝ Մադրասի չորս տպարաններում միասին տպագրած է ընդամենը 36 կտոր գիրք եւ 3 թերթ, իսկ Կալկաթայի 10 տպարաններում - շուրջ 160 կտոր գիրք (չհաշւած բազմաթիւ օրացոյցները) եւ 6 թերթ, որից Օճանասփիւռեան ընկերութեան համանուն թերթը Բոմբէյում :

#### Գ.

Այս թուոցիկ ակնարկից յետոյ, անցնենք մեր ճշտումներին ու լրացրումներին, սկսելով ժամանակի աւագութեան կարգով՝ Հ.Գար Զարպհանալեանից .

Գիտնական հայրը իր աշխատութեան մէջ ընդամենը 13 էջ է յատկացրել (196-209 էջ) Հնդկահայոց Տպագրութեան Պատմութեան : Պարզ է ուրեմն, թէ ո՞րքան սեղմ պիտի լինի նա, թուոցիկ: Բաւական է յիշել, որ գրքի վերջում դրւած հայերէն տպագրութիւնների ժամանակագրական ցուցակում - Հայ տպագրութեան սկզբից մինչեւ 1800 թ. - օրինակ, Մադրասում տպագրւած 22 գրքերից նա յիշատակում է միայն 10, իսկ Կալկաթայում տպւած 5 գրքերից՝ միայն 1 գիրք :

Մեր այս աշխատութեան մէջ, դիւրութիւնն համար, նախ առաջ բերենք Հ. Զարպհանալեանի առաջադրութիւնները, առաջ անմիջա պէս ներկայացնենք մեր դիտողութիւնները։ Աւելացնենք նաեւ, որ մենք մեր ձեռքի տակ ունեցել ենք հնդկահայ համարեա բոլոր հրատարակութիւնները եւ ուրեմն, մեր դիտողութիւնները, փաստական կողմից, կարող են զերծ համարւել ամէն մի կասկածից։



1. Յակ. Շահամիրեանի տպարանից միմիայն 4 հրատարակութիւններ յիշատակելով - «Յորդորակ», «Որոգայթ Փառաց», «Պատմութիւն Նաղը Շահի» եւ «Թարգմանութիւն Նամակի չնորհաց», - Հ. Զարպհանալեանը զրում է - «Կը թողումք յիշել քանի մը տետրականեր։ Այսչափ է, գէթ մեր դիտցածը, նկատմամբ Շահմիրեանի տպագրական գործին»։ (էջ 200)։

Այս խօսքերից այն տպաւորութիւնն է ստացւում, որ կարծէք Շահամիրեանի տպարանը այնքան էլ մեծ ու արժէքաւոր դործունէութիւն չէ ունեցել - ընդամենը 4 անուն դիրք եւ «քանի մը տետրականեր»։ Այն ինչ, եթէ անգամ մի բողէ հարցական համարենք նոյն տպարանում լոյս տեսած Մովսէս Բաղրամեանի երկու չատ նշանաւոր աշխատութիւնները՝ «Այրբենարան» (1772) եւ «Աշխարհադրութիւ Հայաստանի» (1772) - որոնց, դիրքախտարար մենք չենք հանդիպել - Հ. Զարպհանալեանի չիշատակած միւս երկու կարեւոր հրատարակութիւնները - Մեսրոպ Երէցի «Պատմութիւն Մնացորդաց Հայոց եւ Վրաց» եւ «Տետրակ որ կոչի Նշուակ» - արժանի հն անգաման յիշատակութեան եւ պատիւ են բերում Շահամիրեանի տպարանին։

2. Իր հրատարակութիւնների գէթ քանակի եւ մանաւանդ տրպագրական արւեստի կատարելութեան տեսակէտից աւելի նշանաւոր է Շմաւոնեան քահանայի տպարանը։ Զարպհանալեանը նրա բաղմաթիւ ու արժէքաւոր հրատարակութիւններից յիշատակում է միայն «Ազգարար» թերթը եւ 5 գիրք - Մարիանէ կոյսի պատմութիւնը, Սօդինեան քահանայի «Ողը Հայաստանեաց», Շնորհալու «Յիսուս Որդի», Պորփիրի «Ներածութիւն»-ը եւ Մարմուտէլի «Քերիսարիոսը»։ Յայտնի է, որ Շմաւոնեանի տպարանից, բացի «Ազգարար» թերթից, լոյս է տեսել 20 կտոր գիրք, գոնէ մեր ունեցած ցուցակով, որոնցից մի քանիսը մանաւանդ պատկառելի են թէ իրենդ ծաւալով եւ թէ՛ բովանդակութեամբը, ինչպէս, օրինակ, Փոնցիանոսի պատմութիւնը 335 էջ, Բաղդասար դպրի հռչակաւոր քե-

բականութիւնը 609 էջ, Երկրաչափութեան դասագիրքը 55 էջ, Դաւիթ Անյաղթի Սահմանաց գիրքը 658 էջ եւայլն :

3. Խօսելով «Աղդարար»-ի մասին, Հ. Զարպհանալեանը անմիջապէս աւելացնում է .«Վրան Երեսուն և հինգ տարի անցնելիցն Ետքը՝ Սարդիս Ծառուր Աղավալեան նոր տպարան մը կը հաստատէ ի Մադրաս» (էջ 205) :

Հաւանաբար «Երեսուն եւ հինգ տարին» տպագրական վրիպակ պիտի լինի եւ կամ ոչ ճիշտ հաշւած, որովհետեւ Սարդիս Աղավալեանը իր տպարանը հիմնել է «Աղդարար»-ի սկզբնաւորութիւնից (1794թ.) ամենաուշը 15 տարի յետոյ : Յայտնի է, որ 1809 թին Աղավալեանի տպարանից դուրս են եկել կարնեցի Պետրոս Վարդ .Պուռնաղեանի մէկ թարգմանութիւնը՝ «Թանգարան բարեղարդ» 2 հատոր, եւ իր իսկ Աղավալեանի կաղմած «Այրենարանի» 2 հատորները : Հետեւապէս որեւէ հաշւով 35 տարի ստացւել երբեք չի կարող, անդամ եթէ «Աղդարար»-ի սկզբնաւորութիւնից, այլ ոչ թէ դադարումից, հաշւենք ժամանակը :

4. Աղավալեանի տպարանը բաւական արդիւնաւէտ գործունէութիւն է ունեցել .լոյս է ընծայել 6 կտոր (4 անուն) գիրք, որոնցից միայն Երկուսն է յիշատակում չէ .Զարպհանալեանը - Շնորհայու «Ողբը» եւ Յովհաննէս Մրգուղ վարդապետի «Մրգազնագործութիւն կամ ճաշակեցէք»-ը : Զեն յիշատակւած՝ «Թանգարան բարեղարդ» 2 հատոր եւ «Նոր տետրակ այրութենական» 2 հատոր :

5. Մագրասում գոյութիւն է ունեցել ու գործել մէկ տպարան եւս - Եղբարք Յակոբ եւ Յովսէփ Շամրեանների տպարանը : Հ. Զարպհանալեանը որևէ յիշատակութիւն այդ տպարանի մասին չի անում եւ բոլորովին լուսութեամբ է անցնում նրա կողքով, մինչեւ իսկ անունը չիշատակելով :

Թէեւ նա - ինչպէս Երեւում է - շատ կարճատեւ կեանք պիտի ունեցած լինի, հազիւ մէկ տարւայ գոյութիւն, սակայն, նրա գործունէութիւնը նշանաւոր է յատկապէս նրանով, որ նրա հրատարակութիւնները բոլորովին մէկ այլ ուղղութիւն ունեն, քան իր նախորդները : Դրանցից մեզ յայտնի են եւ մեր ձեռքի տակ ունենք միմիայն Երկուսը - Վոլտէրի «Յուլիոս Կեսար» ողբերգութեան եւ Ֆլուեիանի «Նումայ Պոմպէլիոսի» թարգմանութիւնները : Երկուսն էլ տպագրւած 1812թ. «ի Տպարանի Երկոցունց հարազատացն Պարուաց Յակոբայ եւ Յովսեփայ Նազար Շամրեանց» :

6. Անցնելով այնուհետեւ Կալկաթային՝ Վարդապետ հեղինակը շատ աւելի թռուցիկ ու կցկտուր տեղեկութիւններ է հաղորդում, քան Մագրասի մասին : Տպարանների շատերի անունն անդամ չի յի-

շատակում, իսկ 160-ի չափ հրատարակութիւններից մէկ-երկուսի անունն է միայն տալիս: Բայց այդ աղքատիկ տեղեկութիւնների մէջ էլ կան անձշտութիւններ: Այսպէս օրինակ, 208 էջում կարդում ենք «Կալկաթայի տպագրութեանց մէջ Զնթլումէն յառաջ Եպիսկոպոսական տպարանին մէջ եղած է Զուղայեցի Յովհաննէս Վարդապետի Հայ-արար եւ Սիւլէյման տոհմի (1665) ընծայւած կրօնական երկասիրութիւնը»:

Այս փոքրիկ պարբերութեան մէջ մի քանի կարեւոր անձտութիւններ կան: Ամենից առաջ՝ վերոյիշեալ տպարանը աւելի յայտնի է ո'չ թէ Զնթլում Աւետեանի, այլ Աւետ Զնթլումէանի անունով: Երկրորդ՝ յիշեալ Յովհաննէս Վարդապետի աշխատութիւնը հրատարակւած է ո'չ թէ Անգլիական Եպիսկոպոսական ճեմարանի տպարանում, այլ Հայոց Ս. Նաղարէթ եկեղեցու տպարանում: Երրորդ՝ «Հայ-արար» բառերը ո'չ մի առնչութիւն չունեն այդ հրատարակութեան հետ: Ճիշտ է, Յովհաննէս Մրգուղ Վարդապետը հմուտ էր եւ արար լեզւին, բայց իր գիրքը գրել է, դոնէ ըստ աւանդութեան - հայերէն եւ պարսկերէն լեզուներով - մի էջը հայերէն, մի էջը պարսկերէն: Իսկ Ս. Նաղարէթի հրատարակութիւնը միմիայն հայերէն է: Եւ, վերջապէս, չորրորդ՝ երկասիրութիւնը ոչ թէ ճօնւած է Սիւլէյման շահին, այլ վիճաբանութիւն է, որ Վարդապետը ունեցել է Սիւլէյման շահի հետ:

Դէպքը հետեւեալն է: պատմում են, որ մի անգամ շահ Սիւլէյմանը մեծ շուքով հիւր է գախ նոր-Զուղայի Ամենափերկչեան վանքը: Մտնելով տաճարը, նա տեսնում է հիանում է ներսի հոյակապ նկարներով: Հետաքրքրում է եւ նրանց բովանդակութեամբ, թէ ինչ է, օրինակ, Քրիստոսի Աստածութիւնը, երրորդութիւնը եւայլըն, որոնցով այսպէս գեղեցիկ կերպով նկարազարդւած են տաճարի ներսի պատերը: Յովհաննէս Մրգուղը, որ իր գիտնականութեան ու ճգնազգեաց կեանքի համար նաեւ «տիեղերալոյս» է կոչւում, առաջ է գալիս ու մի առ մի բացատրում եւ այնքան չնորհալի ու խելացի, որ միանգամայն դարձացնում է շահին: Յետոյ նոյնը գրի առնելով, մի երեսը հայերէն, միւսը պարսկերէն ներկայացնում է շահ Սիւլէյմանին: Յովհաննէս Վարդապետի այդ վիճաբանական բացատրութիւնները քրիստոնէական կրօնի էութեան մասին առանձին գրքով առաջին անգամ լոյս են տեսնում Կալկաթայում, Ս. Նաղարէթ եկեղեցու նորահաստատ տպարանում: Աւելորդ չենք համարում բերել այստեղ այդ հաղագիւտ գրքի ամբողջ ճակատը -

«Գիրք պատմութեան արարեալ ի նորն Զուղայու սրբոյ Ամենափերկչի գերահրաշ վանի միարան Յովհաննէս ճգնազգեաց վարդա-

պետին՝ վիճաբանութիւն առ Շահ Ալէմանն պարսից։ Տպագրեալ... յամի փրկութեան աշխարհի 1797։ Եւ ի մերոյ ՌՃԽԶ։ Ի Հընդիկու։ ի ծովընթեր մայրաքաղաքն Կալկաթա, ընդ իշխանութեամբ մեծին Բրիտանացւոց։ ի նորակերտ տպարանի որ ընդ հովանեաւ ոուրբ Նազարէթ անուամբ եկեղեցւոյն Հայոց»։

7. Կալկաթայի լաւագոյն եւ մանաւանդ արւեստի տեսակէտից շատ ծաղկած տպարաններից մէկը, եթէ ոչ առաջնակարգը, Պուեցի Պօլոս Վիջէնեանի «Արծիւ» տպարանն էր, հիմնւոծ 1846 թւին։ Այդ տպարանի սկզբնաւորութիւնը Զարպհանալեանը սխալմամբ դւնում է 1842 թ.։ «Վիջէնեանն՝ Արծիւ տպարանն - գրում է նա - հաստատեց ի Կալկաթա, 1842, ուր այլեւայլ հրատարակութիւններ ըրաւ, մանաւանդ եկեղեցական գրոց» (էջ 208)։

Որքան մեղ յայտնի է՝ Վիջէնեանի առաջին հրատարակութիւնն է «Բուրլառ աղօթից», տպւած 1846 թւին։ Հաւանական չէ, որ 1842 հիմնւած տպարանը մինչեւ 1846 թիւը, այսինքն՝ ամբողջ 4-5 տարի, որեւէ հրատարակութիւն չունենար։ «Արծիւ» տպարանը ըստ մեղ՝ հիմնւած պիտի լինի ոչ թէ 1842, այլ 1846 թւին։

Մեր այս ենթագրութեան միւս ապացոյցն էլ այն է, որ Վիջէնեանի տպարանում 1848 թւին տպագրւած Ատենի ժամագրքի, սովորական ժամագրիքի և «Պատարագ կամ ժամերգութիւնք» գրքերի ճակատին կարդում ենք՝ «տպագրեալ յերկրորդում ամի տպարանին»։ Ուրեմն, երբ մէջտեղում տպարանատիրոջ վկայութիւնն ունենք, այն էլ երեք տարբեր առիթներով, այլեւս խօսք լինել չի կարող այն մասին, թէ Վիջէնեանի «Արծիւ» տպարանը հիմնւած է 1842 թ.։

8. Գլխի վերջում Հ. Զարպհանալեանը ասում է. «1833-ին ալ հայկական տպագրութիւնք եղած են ի Կալկաթա ի Մկրտիչ Միսիոնարաց» (էջ 209)։ Այս խօսքերից այն տպաւորութիւնն է ստացւում, որ կարծէք - ա. Բապտիստ կամ Մկրտիչ Միսիոնարների տպարանը հիմնւած պիտի լինի 1833 թւին, եւ ր. որ այդ տպարանում միայն 1833 թւին է հայերէն գրքերի տպագրութիւն եղել, իսկ նրանից առաջ կամ յետոյ՝ ո՛չ։

Յայտնի է, որ Մկրտիչ Միսիոնարների տպարանը գոյութիւն ունէր 1833 թւից ե՛ւ առաջ, ե՛ւ յետոյ։ Ապացոյց՝ նրա լոյս ընծայած հրատարակութիւնները։ Այլէս, «Մտածութիւն ի վերայ Աստուածաշունչ» 1931 թ., «Բովանդակութիւն բոլորի սրբազնի գրուածոց» 1832 թ., «Յորդոր առ գրագիտութիւն» 1840 թ., «Լաւ տետրակ» 1841 թ., «Առաջին քրիստոնէական վարդապետութիւն», 1841, եւն.։

9. Անցնելով Հնդկահայ մամուլին, Զարպհանալեանը յիշատակում է երկու «Ազգարար»-ները Մաղրասում եւ «Ազգասէր», «Օճանասփիւռ» , «Հայելի», «Ուսումնասէր» ու «Հայրենասէր» լրագերեները կալկաթայում եւ առհասարակ Հնդկաստանում :

Այս ցանկի մէջ Մաղրասի թերթերից մոռացւած է վիմատիպ «Բանասէրն», իսկ կալկաթայի թերթերից «Եղբայրասէր», «Շտեմարան» եւ «Ազգասէր Արարատեան» թերթերը, որոնցից մանաւանդ վերջին երկուսը բաւական երկար կեանք են ունեցել եւ շատ մեծ ժողովրդականութիւն վայելել ժամանակին : «Օճանասփիւռ» կամ աւելի ճիշտը՝ «Օճանասփիւռան» թերթը հրատարակւած է եղել ո՛չ թէ կալկաթայում ; ինչպէս Զարպհանալեանն է յիշում , այլ Բոմբէյում : Իսկ «Հայրենասէր» անունով թերթ ո՛չ թէ կալկաթայում , այլ ամբողջ Հնդկաստանում որքան մեղ է յայտնի- չի եղել : Եթէ յիշում է Սինկափորի «Ուսումնասէր» թերթը , ապա պէտք է յիշէր նաեւ այն տեղում հրատարակւած «Սինկափոր» թերթը , ինչպէս եւ «Արեւելեան Հնդկաց Լրագիր»-ը :

Այսքանը Հ. Զարպհանալեանի մասին :

Անցնելով Լէօին՝ նախ պէտք է խոստովանել , որ նա իր աշխատութեան մէջ համեմատաբար աւելի ընդարձակ տեղ է յատկացրել Հնդկահայ Տպագրութեան պատմութեան : Մէկ ամբողջ գլուխ 200 էջից բաղկացած (էջ 416-610) : Սակայն զուտ տպագրութեան պատմութեան վերաբերող մասը կրկին այնքան էլ հարուստ չէ , այն էլ ցաք ու ցրիւ էջերի այդ ընդարձակ տարածութեան վրա : Գլխի մեծագոյն մասը յատկացւած է հնդկահայ կեանքին ընդհանրապէս , որը յաճախ ներկայացւած է վիպական գոյնով ու մանրամանութիւններով : Բայց , դժբախտաբար , այդ քիչն էլ զերծ չէ մի չարք անձտութիւններից ու բացերից , որոնց կարեռագոյնները սրբագրել աւելորդ չենք համարում :

1. Հնդկահայ առաջին տպարանի՝ Յակոբ Շահամիրեանի տպարանի ութ անուն հրատարակութիւններից Լէօն յիշատակում է մի- միայն հինգը - «Ալյրենարան» , «Յորդորակ» , «Որոգայթ փառաց» , «Պատմութիւն մնացորդաց» եւ «Պատմութիւն Դահմաղի» : Զի յիշատակում Մովսէս Բալլրամեանի «Աշխարհագրութիւն Հայաստանի» , «Թարգմանութիւն նամակի չնորհաց» եւ «Ճետրակ որ կոչի նշաւակ» գրքերը :

2. Դահմաղի կամ Նադր շահի պատմութիւնը յիշատակելով , Լէօն գրում է . «Դրանից յետոյ - այսինքն՝ 1780 թ. յետոյ - բոլորովին անհետանում է Շահամիրեանի տպարանը» (էջ 548) : Մի այլ

տեղում այդ անհետացումը նա դնում է 1781 թւից, հակասելով վերի ասածին: «1781 թւականից յետոյ - կարդում ենք 596 էջում - այդ տպարանի (իմա Շահամիրեանի) գոյութեան մասին ոչինչ տեղեկութիւն չկայ»: Յայտնի է սակայն, որ Շահամիրեանի տպարանից 1783 թւին լոյս է տեսել վերոյիշեալ «Տետրակ որ կոչի նշաւակ»-ը:

3. Շիրազեցի Յար. քահանայ Շմաւոնեանի համառօտ կենսագըրութիւնը տալով, գրում է. «1784-ից Մաղրասի եկեղեցու քահանան էր նա» (էջ 597): Այն ինչ, իր՝ Շմաւոնեանի հրատարակած «Բելիսարիոս» (1809 թ.) անունով գրքի յիշատակարանից պէտք է եղրակացնել, որ Շմաւոնեան քահանան 1784-ից շատ աւելի առաջ էլ պէտք է Մաղրասում եղած լինէր - գուցէ Շահամիրեանի տպարանի սկզբնաւորութեան տարիներում:

Դէմքը հետեւեալն է. Շահամիր Սուլթան Շահամիրեանը, ցանկանալով իր որդու անունով տպարան բանալ եւ նօտրագիր ն տառը չունենալով, խնդրում է Տէր Յարութիւնին - որովհետեւ չնորհալի մարդ էր նա - նօտրագիր ն տառը պատրաստել իր համար: Սա էլ, թէեւ գործին միանգամայն անծանօթ, բայց յոյսը Աստծու վրա դրած յանձն է առնում եւ պատրաստում է մի գեղեցիկ ն նօտրագիր: Ինքը, Շմաւոնեան քահանան այսպէս է պատմում գէպքը.՝

«Տէրն իմ - այսինքն՝ ինքը - հրամանաւ Նոր Զուղայու առաջնորդ Մկրտիչ Արքեպիսկոպոսին՝ առաջադրեալ էր գալ ի Մաղրաս, վասն քահանայագործութեան հայոց: Յաւուր միում Աղնուամիտ Աղայ Շամիր Սուլթան, այրն հանճարեղ, ասացեալ է. «Տէր հայր, ևսեմ չնորհալի միտս ունես, նօտր գիր մի նու՝ պակաս է ի տպարանէ մերմէ. արդ կարո՞ղ ես յօրինել, քանզի ցանկալի է ինձ այդ տպարան, վասն անուան որդուոյ իմոյ»: Տէրն իմ - այսինքն՝ ինքը Շմաւոնեանը - երբէք չէր տեսեալ այն գործ, եւ ոչ լուեալ բնաւ. ապաւինելով ի տուիչն բարեաց՝ Սուրբ Հոգին, խոստացեալ էր չինել, որպէս կայ նոյն գիր մինչեւ ցայսօր»:

Ուրեմն Շմաւոնեան քահանայի իր իսկ վկայութիւնից պարզ երեւում է, որ նա, յիրաւի, 1784 թւից առաջ էլ Մաղրասում եղել է որովհետեւ յայտնի է, որ Շահամիրեանի տպարանը բացւել է 1772 թւին: Անգամ եթէ ընդունենք, որ նա Շահամիրեանի տպարանի գոյութեան ընթացքում է այդ ն տառը պատրաստել, այնուամենայնիւ այդ պիտի լինի 1784 թւից առաջ, որովհետեւ գիտենք, որ Շահամիրեանի տպարանի գոյութիւնը տեւել է մինչեւ 1783 թիւը:

Կարելի է ենթադրել, որ Շմաւոնեան քահանան երկու (եւ գուցէ աւելի) անգամ է եղել Մաղրասում - մէկը մինչեւ 1784 թիւը,

իսկ միւսը՝ 1784-ից։ Եւ անհասկանալի չէ այդ։ Մինչեւ այսօր էլ Զուղայի (այլ եւ զաւառների) քահանաները հերթով կամ ընտրութեամբ գնում են Հնդկաստան (այլ եւ Պարսկա-Հնդկաստանի թեմի միւս շրջանները) քահանայագործութեան համար։ Կամ ինչպէս ընդունւած է ասել՝ գնում են թեմի Պաշտօնավարութեան ժամանակաշրջանը սովորաբար Յ տարի է, որից յետոյ թեմի գնացած քահանան կամ պիտի վերադառնայ եւ կամ կրկին հրաւիրւի մէկ եռամսեակի համար։ Շմաւոնեան քահանան եւս, ըստ այդ աւանդական սովորութեան, կարող էր երկու անդամ (կամ գուցէ աւելի) գէպի Մաղրաս թեմի գնացած լինել - 1770-ական թւականներին եւ 1784 թւին։

Մեր նպատակը չէ հերքել Լէօի ասածը, թէ «Շմաւոնեանը 1784-ից Մաղրասի եկեղեցու քահանան էր»։ Ո՞չ այլ ցոյց տալ, որ Լէօի այդ խօսքը չպէտք է հասկանալ բացարձակ իմաստով, թէ Շմաւոնեանը միմիայն 1784 թւից յետոյ է Մաղրասում եղել, իսկ նրանից առաջ - երբեք։

4. Շմաւոնեանի տպարանը իր հրատարակած գրքերի քանակով - այլ եւ նրանց գեղարեստական կատարելութեամբ - ամենահարուտը եւ ամենաբեղմնաւորն է Մաղրասի բոլոր հայ տպարանների թւում։ Մինչեւո Շահամիրեանի տպարանը հրատարակել է ընդամենը 8 կտոր գիրք, Աղավալեանի տպարանը՝ 6 կտոր, Եղբարք Յակոբ եւ Յովսէփ Շամբեաններինը՝ 2, Շմաւոնեանի տպարանը հրատարակել է 20, որոնցից մանաւանդ մի քանիսը թէ նիւթի եւ թէ ծառալի տեսակէտից բաւական աչքի ընկնող։

Լէօն այդ հրատարակութիւններից շատ քչերն է յիշում, ընդամենը 4 հատ - Մարիանէ կյայի վկայութիւնը, Սօգինեան քահանայի «Ողբ Հայաստանեայց»-ը, Շնորհալու «Յիսուս Որդի»-ն և Պորֆիրի «Ներածութիւն»-ը։ Չի յիշատակում - «Գիրք պատմութեան Կայսերն Փոնցիանոսի» (1790), Սիմէօն Կաթուղիկոսի «Փոքրիկ տպարան»-ը (1791), Բաղդասար գպրի քերականութիւնը (1791), Զուղայիցի Յակոբ Թագեանի «Գրքուկ Երկրաչափական»-ը (1792), Արդութեան Արքեպիսկոպոսի «Օրինակ հանդիսաւոր ծանուցման»-ը (1792), «Պատմութիւն անցից սրբակրօն Յակոբ Արքեպիսկոպոսի» (1793), Լուտովիկոս XVI-ի համառօտ պատմութիւնն ու կտակը (1793), Արդութեան Արքեպիսկոպոսի «Օրինական Օրհնութիւն թղթոյն» (1794), «Գիրք Մահմանաց Դաւթի» (1797), «Ղեկավար մանկանց» (1797), «Նպաստամատոյց վաշխայորդ վաճառականաց» (1801), «Բառզիրք անդլ - հայ լեզուի» (1803), «Տետրակ որ կոչի պատճառ»

(1804), «Տետրակ աղօթից» (1804), «Անցք եւ գործք երկուց ժողովսց» (1806) եւ «Բելիսարիոս» (1809) :

5. Վերոյիշեալ ցուցակից զուք տեսնում էք, որ ճիշտ չէ ներկայացնում Լէօն Շմաւոնեանի տպարանից ելած գրքերի յաջորդականութիւնը : Օրինակ, նա ասում է . «Մարիանէ կոյսից յետոյ (1789թիւ) երկրորդ գիրքը (ընդգծումը մերն է . իր.) Սօգինեանցի «Ողբ Հայաստանեայց»-ն է (1791) : Այն ինչ՝ 1789 եւ 1791 թւերի միջում, այն է՝ 1790 թ. լոյս է տեսել Փոնցիանոսի պատմութիւնը, մէկ բաւական ստուար գիրք, 335 էջից բաղկացած : Հետեւապէս Մարիանէ կոյսից յետոյ երկրորդ հրատարակութիւնը ո'չ թէ Սօգինեան քահանայի «Ողբ»-ն է - որը երրորդն է - այլ Փոնցիանոս կայսեր պատմութիւնը :

6. Կամենալով բնորոշել Շմաւոնեանի տպարանական գործունէութեան ուղղութիւնը, գէթ առաջին շրջանում, Լէօն դրում է . «Երմաւոնեանը սկզբում լոկ հրատարակիչ է եւ տպագրում է գլխաւրապէս կրօնական գիրքեր» (ընդգծումը մերն է . իր.) : Վերոյիշեալ ցուցակից պարզ երեւում է, որ Լէօնի բնորոշումը թէ Շմաւոնեանը տպագրում է «Գլխաւրապէս կրօնական գրքեր» - իրականութեան չի համապատասխանում : Նա իր եղրակացութիւնը հանել է Մարիանէ կոյսի վկայաբանութիւնը ի նկատի ունենալով : Մինչդեռ իրապէս կրօնական գրքերը շատ քիչ տեղ են բռնում Շիրազեցու տպարանական գործունէութեան մէջ :

7. Խօսելով Սօգինեան քահանայի «Ողբ Հայաստանեայց» աշխատութեան մասին, Լէօն գրում է . «Թէ ի՞նչ էր պարունակում այդ «Ողբը», մենք չգիտենք» (Էջ 598) : Դժբախտաբար, այդ գիրքը մերձեռքն եւս չի ընկել : Սակայն նրանից մի խոչոր հատւած բերւած լինելով «Յորդոր առ գրադիտութիւն» (Կալկաթա, 1840 թ.) ժողովածուի մէջ, պարզ ու որոշ գաղափար է տալիս «Ողբի» բովանդակութեան եւ ողղութեան մասին : Հայրենասիրական - կրօնա - խըրատական մի երկ է այդ, գրւած տաղաչափութեամբ եւ գրաբար լեզուով : Մի կտոր այդ հատւածից աւելորդ չենք համարում ներկայացնել՝ ընթերցողին որոշ հասկացողութիւն տալու համար այդ եղակի աշխատութեան մասին . .

Եկա'յք որդեակի այսքան ցաւն է ինձ բաւական .

Արիացէք՝ գողիք ժառանգ ձեր սեպիական :

Հարցումն արէք՝ ես ձեզ ասեմ բան խրատական ,

Թէ զինչ լինի՝ ինապ որդւոյդ փրկութեան :

Ի ձեզ բարձէք՝ բնութիւնը ձեր գոռողական ,

Խոնարհեսցիք եւ տքնեսցիք ուսումնական :

Ընթեռնըլով ի հին գրուածըս պատմական,  
 գուշիք զպատճառ՝ Ազգակորոյս մեր աւերման:  
 Արդ՝ դուք բարձէք անանց ձերոց ախտ ծուլութեան,  
 արիացէք՝ մտէք հանդէսըս քաջութեան:  
 Իմաստութեամբ զարդարեսչիք պատրաստական,  
 վարուք մաքուր, մոօք զզգաստ արքնական:  
 Ի բաց քողէք զվըլնալի վարք գեր որ կան,  
 նախանձ բարեաց ի ձեզ բերէք յարամնուկան:  
 Եւ մի՛ կարծէք՝ մեզ նորոգումն անհնարսական,  
 զի յԱստուծոյ են հնարաւորք ամենայն բան:  
 Հայեցարուք՝ զվումք Ազգացն Անգլիական,  
 որք ի քնէ ձկնորսք էին եւ ապա բան:  
 Զարքեան ի քնոյ՝ տեսին զինքեանս թէ որպէս կան,  
 եւ զբաղցրութիւն ազատութեան մտօք ծանեան:  
 Ուստի ջանի՛ իմաստութեան հետեւեցան,  
 եւ զծուլութիւն յինքեանց թողին միանգամայն:  
 Այսօր փայլին ի մէջ Ազգաց իբր կարկեհան,  
 իմաստութեամբ եւ զօրութեամբ յոշժ նոխացան:  
 Արդ տեսանեմ՝ յԱզգիս մերմէ որ բազումք կան,  
 զմերն քողեալ՝ յարին ի վարս այլասերման:  
 Ումանիք Պարսից՝ զկերպն առեալ որպէս բնական,  
 ումանիք եղեն Հազարացւոց նըմանական:  
 Ումանիք վարուք՝ Անգլիացւոց կերպ փոխեցան,  
 որք բընակեալք՝ կան ի կողմունըս Հնդկական:  
 Թողում յիշել՝ եւ այլք բազումք որք ցրուեալք կան,  
 ազգի ազգի կերպս փախելով, գոն այլազան:  
 Տէր Աստուած մեր՝ ի քէն հայցեմ անձամբ բախձեալ,  
 լուր զիմ բանիս՝ որ վասն Ազգիս պաղատեցեալ:  
 Թնդէտ եմ ես՝ յոյժ զագրալի, մեղօք լրցեալ,  
 Բայց դու Փրկիչ՝ շնորհիդ քոյ եմ ապաւինեալ:  
 Ազգին մերոյ՝ այց արացես որ եմք նուազեալ,  
 զի միւս անգամ ժողովեցես՝ որ կամք ցրուեալ:

«Յորդոր» Էջ 26-30.

8. Իր աշխատոթեան 607 էջում Լէօն գրում է. «1796 թւականից  
 յետոյ, Յարութիւն քահանային մենք այլեւս չենք տեսնում գրական  
 եւ հրատարակչական ասպարէզում»: Իրականութեան չի համապա-  
 տասխանում եւ այս վճռական յայտարարութիւնը: Շմաւոնեանի տը-  
 պարանի հրատարակութիւնների ցուցակը, որ բերինք վերևում, բո-  
 ղոքում է դրա դէմ: Բնդհակառակը, 1796 թւից, այն է՝ «Ազգարա-

ր»-ի դադարումից յետոյ՝ բաւական երկար ժամանակ ապրել ու գործել է Տէր Յարութիւնի տպարանը, տալով ազգին ութը նշանաւոր հասորներ, որոնց վերջինը՝ «Բելիսարիոսը» 1809թ.: Նշանակում է՝ «Ազգարարի» դադարից յետոյ Շմաւոնեան քահանան, հակառակ է հայուղին, ամբողջ 13 տարի մնացել ու գործել է «գըրական ու հրատարակչական ասպարէզում», ունենալով բաւական արդիւնաւէտ գործունէութիւն:

9. Լէօն Շմաւոնեանի տպարանով փակում է Հնդկահայոց տըպարանական - հրատարակչական գործունէութիւնը Մաղրասում եւ այնուհետեւ անցնում է Կալկաթա: «Բայց տպագրութիւնը Հնդկաստանում չի անհետանում», այսինքն՝ Մաղրասից յետոյ - կարգում ենք մենք այնուեղ: «Նոյն 1796 թւին, երբ դադարեց «Ազգարարը», մի նոր տպարան բացվեց, այս անդամ Կալկաթայում» (էջ 608):

Պարզ է, որ մի խոչոր թիւրիմացութիւն կայ այստեղ, որովհետեւ - ինչպէս յիշեցինք - Շմաւոնեանի տպարանից յետոյ՝ դեր երկու ուրիշ տպարան էլ ենք ունեցել Մաղրասում - Սարգիս Ծատուր Աղավալեանի եւ Յակոբ եւ Յովսէփ Շամբեանների:

10. Անցնելով Հայկական տպագրութեան Կալկաթայում, Լէօն մեզ տալիս է միմիայն Ս. Նազարէթ Եկեղեցու կամ Յովսէփի քահանայ Ստեփաննոսեանի տպարանի գործունէութիւնը, որը տեղի է ունեցել Ժ. դարի վերջերում: Կալկաթայի միւս բազմաթիւ հայ տըպարանների մասին նա լուսաւ է, որովհետեւ նրանց գործունէութիւնը ընկնում է արդէն Ժ. դարում, իսկ ինքը նպատակ է դրել իր գըրքի երկրորդ հատորում ներկայացնել միմիայն Ժ. դարի հայկական տպագրութեան պատմութիւնը:

Ս. Նազարէթ տպարանից էլ նա յիշատակում է ընդամենը երկու գիրք միայն - Արքահամ Կաթուղիկոս Կրէտացու պատմագրութիւնը եւ Յովհաննէս Տիեզերալոյս վարդապետի «Վիճաբանութիւն առ շահ Սլէյման Պարսից» խորագրով աշխատութիւնը: Ուրիշ խօսքով՝ ուրեմն չի յիշատակում նոյն տպարանում լրյու տեսած միւս Յ հրատարակութիւնները - «Գրքոյկ ժողովածու խրատական» (1796թ.), «Տետրակ առ ի պէտո վաճառականաց» (1797թ.) և «Գրքուկ որ կոչի «Ֆիկ մերտէ» (1798թ.):

Հետեւաբար, ըստ Լէօնի՝ Ս. Նազարէթ Եկեղեցու տպարանը ընդամենը երկու տարւայ կեանք է ունեցել եւ ազգին տւել է միայն 2 գիրք: Այն ինչ նա ունեցել է Յ տարւայ կեանք (1796-1798) եւ տըւել է 5 կտոր գիրք:

11. Խօսելով Հնդկահայոց ականաւոր մանկավարժ եւ սեփական վարժարանի հիմնադիր ու տնօրէն Յարութիւն Գալուցեանի մասին,

Լէօն գրում է . «Պատանեկութեան հասակում այս հայը , որ ծնւած էր Բերիայի գաւառում , գնում է Հնդկաստան , ուսում է ստանում Բէնդալեան նահանգի (Երեւի Կալկաթայի) անդլիական դպրոցում և ապա բաց է անում կանոնաւոր դպրոց XVIII դարի վերջերում : Դըպրոցը 25 տարի գոյութիւն է պահպանում եւ այնքան յայտնի է դասնում , որ նոյն իսկ Պարսկաստանից այնտեղ երեխաներ էին ուղարկում : Գալուցեանը պատրաստում է բազմաթիւ աշակերտներ , որոնցից շատերը նշանաւոր հանդիսացան նոյն իսկ Հնդկաստանում . (էջ 610) :

Այս ամբողջ պարբերութիւնը կարիք ունի հիմնական սրբագրութեան , որովհետեւ մի շարք անձառութիւններ ունի մէջը : Ամենից առաջ՝ պարզ չէ , թէ Լէօն Բերիայի գաւառ ասելով ի՞նչ է հասկանում . արդեօք Հալէպի<sup>®</sup> ըրջանը , որ այսօր Սաի Կաթողիկոսութեան Բերիայի կամ Բերիոյ թեմն է կազմում , թէ<sup>®</sup> Սպահանի նահանգի (Պարսկաստան) Փէրիայի հայաբնակ գաւառը : Երկրորդ՝ մինչեւ այսօր էլ տակաւին պարզւած չէ վերջնապէս Գալուցեանի ստորդ ծընդավայրը : Օրինակ , ըստ «Յորդորի» (Կալկաթա , 1840) , ուր կայ Գալուցեանի համառօտ կենսագրութիւնը , Հալէպի է նա : Իսկ ըստ Յովհաննէս Աւգալեանի , որը նրա աշակերտն է եղել ու յետոյ էլ պաշտօնակիցը , Եւգոկիացի է : Ուրեմն Հալէպի կամ Եւգոկիացի , բայց յամենայն դէպս ո՛չ Սպահանի Փէրիացի : Երրորդ՝ ստորդ յայտնի է Գալուցեանի դպրոցի բացման թւականը , անգամ ամիսն ու ամսաթիւը - 1797 թ . Դեկտ . 28 , թէեւ «Յորդորը» գնում է 1798 թւին : Հետեւապէս այս որոշութեան հանդէպ շատ անորոշ է Լէօն «XVIII դարի վերջերում» արտայայտութիւնը : Չորրորդ՝ Գալուցեանի դպրոցն ու մանկավաժական գործունէկութիւնը տևել են ո՛չ թէ 25 տարի - ինչպէս զնում է Լէօն , այլ 35 տարի : Այս մասին քանիցը չեշտւած է «Յորդորի» մէջ : Բացի դրանից Յովհ . Աւգալեանը նրա Յօմենակին նսիրած մի ներբող ունի հրատարակած , որը որևէ կասկած չի թողնում այդ մասին : Գրքոյկի Խորագիրն է . «Ներբողեան յիշտապակ բարեպաշտին Գալուցեան Պարոն Յարութիւնին՝ Երեսուն և հինգամեայ արդիւնաշատ վարժապետին» . (Կալկաթա , 1834) :

Աւելորդ չենք համարում մի քանի քաղւածք անելու թէ<sup>®</sup> «Յորդորից» եւ թէ «Ներբողեանից» նախ՝ մեր դիտողութիւնները հաստատելու , եւ երկրորդ՝ Հնդկահայոց մշակոյթի այդ ականաւոր ներկայացուցչի ու տիպար ուսուցչի կեանքին աւելի մօտկից ծանօթացընելու համար .

«Վարպետ Յարութիւն Գալուց 1) Հալապցին Կալկաթու ինկլիզի Ողորմութեան ըշկօլումն (Փքի սգուլ) մուֆթ2) բնակութիւն, խաց, չոր, գիրք, քաղաք3), գդավ4), և ինկլիզեար սաւորէց . և ըշկօլիցն դուս եկալ: Սա թէսէտ Հայեւար գրել կարդալն Հալապ Քաղաքումըն պղտկուց սաւորէլէր . ապա հայեւար քերականութիւնն ի Կալկաթա Աղայ իմինի մօտ սաւորէց : Սա Կալկաթու Գրէքի 5) Ժամատան մօտ ինկլիզեւար Հայեւար ուսում տալէ 6) համար թիւն . 1798ռ ումն Ըշկօլ բացաւ . իւր ջանքովն . բարի եւ համեստ բնութեամբն . իւր էս Ըշկօլն օրաւուր ըսկսեց մեծանալն . եւ Վրացի Աղա Դաւութ Աղայ Աստուածատրէ Ըշկօլն ոչընչացաւ . պատճառն որ Աղա Դաւութն մի միայն Հայեւար էր ուսում տալման 7) ապա սա Հայեւար եւ ինկլիզեւար . Վարպետ Յարութիւն Գալուցի ուսումնարանն (Ըշկօլն) էնպէս մեծացաւ որ իւր եկամտովն լինքն 8) պատկէց . . իւր Ըշկօլումն փողով եւ անփող ուսումված աշակերտներիցն դեռ եւս շատոնք կենդանի են . և ոմանքէլ երևելի Պարնիքն : 10)

Վարպետ Յարութիւն Գալուցն իւր Ըշկօլովն Հայոցս Ազգումն էնպէս համեստ եւ խաթրապախութեամբ եւ ջանացողութեամբ վարվեց . որ ինքն լէվ 11) առաջացալ . եւ Ազգին լաւ օդնական եղեւ . և Ազգին էնպէս սիրելի եղեւ որ երրոր մեռու Պատուելի Հայ Պարնիքն սորա պատկերքն քաշել տվին և Կալկաթու Մարդասիրական ձեմաւանումն որմիցն 12) կախեն տվէլ . («Յորդոր», էջ 60-62):

«Ներբողեանի» սկզբում կայ Յովհ . Աւղալեանի Ազգը , ուր կարդում ենք . «Զբարեյիշատակ զարդիւնաշատ զբազմերախտ Վարժապետն զՊարոն Յարութիւն Գալուցեան Եւդոկիացին , որ յընթացս երեսն և հինգ ամեայ մեղուածան անդուլ անձանձիր երկասիրութեան՝ հերկագործեալ մշակեաց արգասաւոր պտղաբերութեամբ ըդրանեղէն անդս մտաց հարիւրոց Հայասեռ համբակաց ի

1) Հնդկահայերը, ինչպէս եւ Զուզայեցիք, անգլիական ազգեցութեամբ, ազգաւան եան վերջաւորութիւնը յանախ ագում են: 2) Մուֆթ-Ճրի . 3) Քաղաք - քուղք . 4) գդավ-ստացաւ . գտնել բայը Զուզայի եւ հնդկահայոց բարբառում գործ է ածում նաեւ ստանալու մատով . 5) Գրէքի-յունաց . 6) տալէ, Աստուածատրէն սեռական են . Զուզայի եւ հնդկահայոց բարբառում սեռական հոլովը յանախ վերջանում է կով: 7) տալման, գոլման են . -տալիս, գալիս . 8) յինքն-յինքն . Զուզայի եւ հնդկահայոց բարբառում ձայնաւորով սկսող բառերը, մանաւանդի - ով - եւ ա - ով, յանախ սկզբից առնում են . 9) ուսումված - ուսած, սովրած . 10) պարմիք - պարուներ, աղայի, մեծ մարդու իմաստով . 11) լէվ - լաւ . 12) որմիցն - պատիցն, որմ - պատ:

Կալկաթա եղելոց և ի կողմանց Հնդկաց այսր իբրև ի նոր Աթէն դասադաս եկելոց ժողովելոց . . .»

Այսուհետեւ յաջորդում է բուն ներբողը ոտանաւորով, «րից ահաւասի՛կ մի-երկու հատւած՝ քաղելով նոյն «Յորդոր»-ից . . .

Հարան սաստիկ ի հոգի իմ փուշք սպոյ,  
Աղբերք սրտիս լնանին իմ՝ լինք լուսոյ,  
Երբ նկարեմ աչաց իմոց յանդիման  
զիմ Վարժապիտ՝ զՅարութիւն Գալուցեան:  
Նորուն նկամբք դպրոց ուսման կառուցաւ,  
ուր վարժեցան մանկունք քուով ո՛չ սակաւ.  
մեզ գիտութեան շախիդ նովաւ յորդեցաւ,  
կրկին կրկին դուռն իմաստից մեզ քացաւ:  
Յորդին և յիս շիք-ք արտասուաց սաստկագոյն,  
յիս՝ի նուասու քոյ աշակերտ ձեռնասուն,  
ում խնամածու եղև քոյ քաղցր հայրութիւն,  
ում յար ցուցեր սէր երախտեաց սէր անհուն . . .

Մէկ անգամ էլ կրկնենք, որ մեր այս ճշտումներով ու լրացում-ներով մենք միայն մէկ նպատակ ունենք - նիւթ մատակարարել մեր Ծպագրութեան պատմութեան համար եւ նպաստել, որ այդ պատմութիւնը գրւի ճիշտ: Եւ, ի հարկէ, բնաւ յաւակնութիւն չունենք, որ այս ճշտումնին ու լրացումները վերջնական են, անխոցելի: Նրանք ճշմարիտ են մի միայն այսօրւայ տւեալներով, այսօրւայ մեր ունեցած տեղեկութիւնների սահմաններում: Սակայն վաղը կարող են հնդկահայ հրատարակութիւններից նոր հատորներ գտնել եւ նոր լոյս սփուելով՝ այսօրւայ տեսութիւնները հիմնովին յեղա-շըրջել:

Նոր Զուրա - Սպահան

